

Կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքը



Այս իրավունքը կանանց հաջողվեց ձեռք բերել միայն 19-20-րդ դարի սահմանագծին, ընդ որում, առաջամարտիկի դերում հանդես եկան ԱՄՆ առանձին նահանգներ, Նոր Զելանդիան (1893 թ.), Ավստրալիան (1902 թ.): Եվրոպական երկրներում կանայք ընտրելու իրավունք փոքր-ինչ ուշ ստացան. Ֆինլանդիայում՝ 1906 թ., Նորվեգիայում՝ 1913-ին, Դանիայում և Իսլանդիայում՝ 1915-ին: 1919 թ. քվեարկելու իրավունք ստացան Ավստրիայի, Գերմանիայի, Նիդեռլանդների, Լեհաստանի, Եվեդիայի, Լյուքսեմբուրգի, Չեխոսլովակիայի կանայք, 1918 թ. Կանադայի, 1920-ին՝ ԱՄՆ-ի, 1922-ին՝ Իռլանդիայի, 1928-ին՝ Մեծ Բրիտանիայի, 1931-ին՝ Իսպանիայի և Պորտուգալիայի: Թուրքիայում կանայք ձայնի իրավունք ստացան 1934-ին, Ֆրանսիայում՝ 1944-ին, Իտալիայում և Ճապոնիայում՝ 1945-ին, Հունաստանում՝ 1956-ին, իսկ Եվեյցարիայում՝ 1971 թ.: Խորհրդային Ռուսաստանում կանայք տղամարդկանց հետ հավասար ընտրելու իրավունք ստացան 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո, սակայն քչերը գիտեն, որ իրականում դա տեղի է ունեցել մի փոքր ավելի վաղ՝ ժամանակավոր կառավարության որոշումով: Հայաստանում կանայք առաջին անգամ ընտրելու իրավունք ստացան առաջին հանրապետության օրոք, հետագայում այն ամրագրվեց նաև Խորհրդային իշխանության կողմից:

Հանուն ձայնի իրավունքի պայքարում էին սուֆրաժիստուհիները



Ընտրելու իրավունքը կանանց բաժին ընկավ համառ պայքարում: Սուֆրաժիզմ (suffrage՝ ձայնի իրավունք) այսպես էր կոչվում կանանց շարժումը՝ ուղղված տղամարդկանց հետ հավասար կանանց ընտրական իրավունքներ տրամադրելուն: Սուֆրաժիզմը ծագել է Մեծ Բրիտանիայում՝ 19-րդ դարի երկրորդ կեսին, ապա տարածվել ԱՄՆ-ում, Գերմանիայում և այլ երկրներում: Սուֆրաժիստուհիները դիմում էին (հատկապես Մեծ Բրիտանիայում) ծայրահեղ միջոցների, կազմակերպում աղմուկոտ ցույցեր, իրենց գամում էին ցանկապատին, հացադուլ հայտարարում, ահաբեկչական ակտեր կազմակերպում: 1918 թ. Մեծ Բրիտանիայում ընտրելու իրավունքը նախ տրամադրվեց միայն 30-ն անց կանանց, ու միայն 1928 թ. նրանք հավասարեցվեցին տղամարդկանց:

Ես երջանիկ եմ: Ես չեմ կարող դրան հավատալ



20-րդ դարի վերջին կանայք ընտրելու իրավունք ունեցին աշխարհի երկրների գրեթե 95%-ում: Ու միայն առանձին երկրներում, որոնց թվում էին Բրունեյը և Մերձավոր Արևելքի հինգ երկրներ՝ Բահրեյնը, Քուվեյթը, Օմանը, Քադարը, Սաուդյան Արաբիան, նրանք ձայնի իրավունք չուներին: Իսկ այժմ միայն մեկ երկիր է մնացել, որում կանայք զրկված են ընտրելու իրավունքից՝ Սաուդյան Արաբիան: 2005 թ. Քուվեյթի Խորհրդարանը պատմական որոշում ընդունեց կանանց ընտրելու և ընտրվելու իրավունք տալով: Դա ինչու էր գտնվող Քուվեյթի կանանց իրավունքների և ազատությունների համար պայքարող շարժման ակտիվիստուհիները Խորհրդարանի որոշումը դիմավորեցին բռուն ծափահարություններով: «Ես երջանիկ եմ: Ես չեմ կարող դրան հավատալ», - ցնծում էին նրանք:

Նիսեր և քաղաքականությունը

«Էրատո և Ջաբել թագուհիներն արժանացել են պետականության խորհրդանշան հանդիսացող դրամի վրա իրենց պատկերը հավերժացնելու պատվին»:
178 339
Էջ 4

Հունվար, 2008 թ.

Ամենամսյա անվճար հավելված



Կանայք ընտրություններում եւ ընտրության առջեւ

Նախագահական մրցավազքի մեջ մտած թեկնածուների երկար ցուցակում, ինչպես հայտնի է, կանայք չկան: Ընդ որում, սա Հայաստանի հինգերորդ նախագահական ընտրություններն են, երբ կանայք կամավոր հրաժարվեցին երկրի գլխավոր պաշտոնի համար թեկնածուի կարգավիճակից՝ բավարարվելով տղամարդկանց ընտրելու իրավունքով: Ինչպես նաև նրանց հարթանակն ապահովելու նվիրումով՝ որպես նախընտրական շտաբերի ղեկավարներ, վստահված անձինք, դիտորդներ, ընտրական հանձնաժողովների անդամներ, մամուլի քարտուղարներ և այլն: Եվ քանի որ նրանք այս բոլոր դերերը բավական հաջողությամբ են կատարում, տարեցտարի աճում է այն կանանց թիվը, որոնց ներգրավում են ոչ միայն ընտրական քարոզարշավների կազմակերպման, այլև դրանց ղեկավարման գործում: Գուցե սա էլ դեպի մեծ քաղաքականություն տանող ճանապարհ է, սակայն բավական երկար, քանի որ շտաբի ղեկավարից թեկնածու դառնալու նախադեպեր առայժմ չեն արձանագրվել:

Կնոջ դերը Հայաստանի նախագահական ընտրություններում զմահատելիս առաջանում է անմիջապես երեք հարց:

Առաջին՝ «Ինչու՞ անկախության տասնյոթ տարիների ընթացքում կանայք ոչ մի անգամ չեն առաջադրվել Հայաստանի նախագահի պաշտոնում»: Սա համարձակ կարելի է դասել հռետորական հարցադրումների շարքը: Վերջին տարիներին անցկացված սոցիոլոգիական հարցումների ընթացքում հայտնաբերվել են 25%-ից ոչ ավելի քաղաքացիներ, ովքեր պատրաստ են պետության ղեկը վստահել կնոջը: Համեմատության համար. ԱՄՆ-ում կին նախագահի օգտին այսօր պատրաստ է քվեարկել մինչև 75%-ը, Ռուսաստանում՝ 55%-ը: Նշենք,

որ բեկումը հասարակական կարծիքում արձանագրվեց կանանց նախագահ առաջադրվելու առաջին իսկ փորձերից հետո: Ռուսաստանում 2004-ին Իրինա խակամադաջի, ԱՄՆ-ում՝ 1999-ին Էլիզաբեթ Դոուլի շնորհիվ:

Երկրորդ հարցն ուղղված է թեկնածուներին. «Նրանք ի՞նչ չափով են հաշվի առնում կանանց շահերը նախընտրական ծրագրերում»: Հայացքիս հայացքն իսկ ցույց է տալիս, որ կանանց հիմնախնդիրները պարտադիր առաջնահերթությունների թվին չեն դասվում: Իսկ եթե նույնիսկ հիշատակվում են, ապա, որպես կանոն, մայրության և մանկության մասին ավանդական հոգատարության շրջանակներում միայն: Ճիշտ է, գո-

յություն ունի նաև կանանց հասարակական կազմակերպությունների գործունե, որոնք իրենց ուժերի և հնարավորությունների սահմաններում ջանում են թեկնածուների ուշադրությունը հրավիրել կանանց իրավունքների և կարգավիճակի խնդրին: Թեկնածուները նրանց հետ չեն վիճում, սակայն հրապարակավ արտահայտում են կանանց իրավունքների մասին իրենց սեփական մտտեցումը. եկեք նախ պաշտպանենք տղամարդկանց ուսնահարված իրավունքները, նրանց հնարավորություն ընձեռենք արժանապատվորեն ընտանիք պահել, և այդ ժամանակ կանանց խնդիրների մասին գուցե հարկ էլ չլինի խոսել:

Վերջին՝ երրորդ և ընտրություններից առաջ ամենաայժմեական հարցը. «Ո՞ւմ են ընտրում կանայք և ի՞նչ շարժառիթներից են ընտրվում»: Որքան էլ տարօրինակ է, սակայն դրա պատասխանը չի հետաքրքրում ոչ միայն թեկնածուներին, այլև հայրենի սոցիոլոգներին: Համեմայնդեպս, այս ուղղությամբ հետազոտություններ չեն անցկացվում: Մինչդեռ Արևմուտքում խոշոր գումարներ են ծախսվում պարզելու, թե, ի վերջո, ինչ են ուզում կանայք, ովքեր, պարզվում է, շատ ավելի ակտիվորեն են մասնակցում քվեարկությանը, քան տղամարդիկ:

Ու քանի որ վաղուց անցյալի գիրկն են անցել ենթադրությունները, թե կանայք քվեարկում են այնպես, ինչպես իրենց ամուսինները, թեկնածուները հաճախ խորհրդատուների մի անբողջ բանակ են պահում կանանց ընտրազանգվածի հետ շփվելու համար: Այս տեխնոլոգիաները, սակայն, ոչ մի ընդհանուր բան չունեն մեր իրականության հետ: Նախ մենք երևիցե չենք փորձել պարզել արդյո՞ք մեզանում էլ կանայք ավելի հաճույքով են գնում ընտրատեղամասեր, քան տղամարդիկ: Կարելի է ենթադրել, որ Հայաստանում տղամարդկանց աշխատանքային միգրացիայի հետևանքով ընտրազանգվածի մեծ մասը կանայք են: Ինչ վերաբերում է կանանց և տղամարդկանց ընտրական նախապատվությունների տարբերությանը, ապա այս հարցում մենք գերադասում ենք առաջնորդվել կարծրատիպերով, իսկ առանց լուրջ հետազոտությունների դժվար է ամբողջական պատկերացում կազմել:

Այնուամենայնիվ, մենք փորձենք գտնել այս և մյուս հարցերի պատասխանները և ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում բացահայտված կարծիքների ողջ բազմազանությունը՝ ներառյալ Հիլարի Բլինթոնի փրայմերիզի արդյունքներով մեր գրուցակիցների անհանգստությունը:

ՖՈՏՈՒՈՒ

Ի՞նչ են առաջարկում թեկնածուները

Մտահոգում է արդյոք այս հարցը մեր թեկնածուներին: Ընտրությունների ընտրություն ածում է Արևմուտքից փոխառված տեխնոլոգիաների թիվը, որոնք հաջողությամբ արձատարվում են հայրենի հողում...



Ազգային ժողովրդավարական միության (ԱԺՄ) առաջնորդ, նախագահի թեկնածու Վազգեն Մամուկյանը շտաբում հայտնեցին, որ կանանց ընտրազանգվածի հետ առանձին չեն աշխատում: Սակայն հիշեցրին, որ իրենց թեկնածուն քաղաքականության մեջ կնոջ գործունի մեծ կարևորություն է տալիս...

Կին ընտրողներին չի առանձնացնում նաև «Ազգային միաբանության» թեկնածու Արտաշես Գեղամյանը, սակայն, ինչպես հաղորդեց նրա նախընտրական շտաբի անդամ Գագիկ Թադևոսյանը, «Մեր կուսակցությունն առաջիններից մեկն արձագանքում է կին առաջնորդների ակունքին»:

րատեսչությունը և, ինչու չէ, տնտեսությունը... «Մեր թեկնածուն և մենք բոլորս կարծում ենք, որ հասարակության մեջ կանանց դերը խիստ կարևոր է, իսկ նրանց ներկայությունը խորհրդարանում անկասկած ոգևորում է և առաջընթաց պահովում»:

Էդուարդ Շարմազանյանը 33 վարչապետ ու նախագահի թեկնածու Սերժ Սարգսյանի շտաբի մամուլի քարտուղարը, հաղորդեց. «Թեպետ մենք կանանց ընտրազանգվածի հետ առանձին աշխատանք չենք կատարում, սակայն այն ծրագիրը, որն ընտրվելու պարագայում պատրաստվում է իրականացնել մեր թեկնածուն, ուղղված է բնակչության բոլոր շերտերի, այդ թվում և կանանց կյանքի լավացմանը: Բացի այդ, հայտնի է, որ Հայաստանում գործում են շուրջ հարյուր կանանց հասարակական կազմակերպություններ, որոնց հետ մենք պատրաստ ենք ակտիվորեն համագործակցել: Նշեն նաև, որ մեր թեկնածուի կողմնակիցների շարքում շատ են կանայք, և նրանք իրենց խնդիրների լուծման ակնկալիքները կանայն են հենց Սերժ Սարգսյանի ընտրվելու հետ»:

Ժողովրդական կուսակցության առաջնորդ, «ԱՄՍ» մեդիա-հոլդինգի ղեկավար, նախագահի թեկնածու Տիգրան Կարապետյանի խոսքերով իր

Ինչպե՞ս գրավել կին ընտրողների ուշադրությունը



ընտրազանգվածի երկու երրորդը կանայք են: Շատ մարգային կուսակցական գրասենյակների ղեկավարները նույնպես կանայք են, օրինակ՝ Վանաձորում, Հրազդանում: Տիգրան Կարապետյանն ասում է, որ կին ընտրողների հետ առանձին քարոզչություն չի անում, սակայն չփորձում է իր ընտրազանգվածի հետ մշտապես, այլ ոչ միայն ընտրությունների ընթացքում: «Ընդհանրապես, իմ ստվերային կարիերայում ես բոլոր պաշտոնները կանանց կվստահեմ, միայն թե լավ աշխատեն»:

Էլենուրա Ասատրյանը նախագահի թեկնածու Արման Մելիքյանի շտաբի մամուլի քարտուղարը, նույնպես խոստովանում է, որ կանանց հետ հատուկ միջոցառումներ չեն տարվում: Նրա խոսքերով Մելիքյանն ակտիվորեն համագործակցում է կանանց կազմակերպությունների, կին առաջնորդների հետ և մարդկանց մեջ գնահատում է առաջին հերթին պրոֆեսիոնալ որակները՝ անկախ այն բանից կին է, թե՛ տղամարդ: Գիշտ է, մամուլի քարտուղարի խոսքերով իրենց թեկնածուն համարում է, որ կանայք ավելի անկեղծ ու ազնիվ են և ենթագիտակցորեն ձգտում են արդարության: «Հավանաբար այդ պատճառով կանայք մեր նախընտրական շտաբ շատ հաճախ են դիմում», - ասում է Ասատրյանը:

ՀՀ կուսակցության թեկնածու Հասան Գուլիանյանի մամուլի քարտուղար Սպարտակ Սեյրանյանը

շտապեց հիշեցնել, որ գենդերային իրավահավասարությանը իրենց կուսակցությունը միշտ լրջորեն է մտնեցել: «Դատեք ՀՀ-ի խորհրդարանական խմբակցությունով, որի կազմում ընդգրկված է երեք կին»: Այնուամենայնիվ, Սպարտակ Սեյրանյանի խոսքերով քարոզարշավի ընթացքում կին ընտրազանգվածի հետ հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում: Սկսած նաև Կահան Հովհաննիսյանի անձնական կարծիքը. «Մենք կարծում ենք, ոչ, մենք համոզված ենք, որ կնոջ ակտիվ դերը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում նպաստում է դրական փոփոխությունների արագացմանը: Եվ մենք մեր կուսակցության օրինակով կոչ ենք անում մյուս քաղաքական ուժերին վստահել կանանց»... Ի դեպ, թեկնածուի կայքում քվեարկություն է անցկացվում նրա նախընտրական ծրագրում նշված հինգ գերակայությունների շուրջ: Կանանց իրավունքների հիմնախնդիրը դրանցում ստացել է ամենաբարձր ծայրերը ընդամենը 5%, իսկ կոռուպցիայի դեմ պայքարը ամենաշատը 38%:

Առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շտաբում համոզված են, որ իրենց իշխանության գալով կշահեն բնակչության բոլոր շերտերը, այդ թվում նաև կանայք: Մամուլի քարտուղար Արման Մուսխիյանի խոսքերով երբ երկիրը իրոք համապատասխան ժողովրդավարության չափանիշներին և

կաշխատի այնպիսի կարևոր ինստիտուտ, ինչպիսին քաղաքացիական հասարակությունն է, այդ ժամանակ նաև կանանց օրակարգում նշված բոլոր հիմնականները կլուծվեն: «Մեր շարքերում շատ են կանայք, աղջիկները, ովքեր գալիս են գիտակցելով նման փոփոխությունների անհրաժեշտությունը»:

Ազգային համաձայնությունը կուսակցության առաջնորդ Արամ Հարությունյանը հաղորդեց, որ իր օրակարգում նշված են առանձին միջոցառումներ կին ընտրողների հետ, սակայն ինքն ու իր գիմնակիցները դեմ են ընտրազանգվածը տղամարդկանց ու կանանց բաժանելուն: «Զի լինում, որ կանանց համար լավ լինի, երբ երկրում ընդհանուր իրավիճակը բարվոք չէ: Սակայն ես իրախոսությամբ կվստահեմ պատասխանատու պետական պաշտոնները կանանց, եթե միայն նրանց մասնագիտական հատկությունները համապատասխանեն անհրաժեշտ պահանջներին: Ի վերջո, նայեք Յուլյա Տիտչենկոյին, մի կին, որը ոչ մի տղամարդու չի զիջում»:

Առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի շտաբում համոզված են, որ իրենց իշխանության գալով կշահեն բնակչության բոլոր շերտերը, այդ թվում նաև կանայք: Մամուլի քարտուղար Արման Մուսխիյանի խոսքերով երբ երկիրը իրոք համապատասխան ժողովրդավարության չափանիշներին և

Ամենա Ասպյան

Կարծիքների խաչմերուկ

Նավապարհ, թե՞ չհավապալ խոսարումներին

«Ի՞նչ պահանջներ ունեն նախագահի թեկնածուները: Ոչ մի: Միայն խոստումներ են տալիս: Ել ինչո՞ւ ի իզուր խնդրել», - այսպես էին պատասխանում այն կանանցից շատերը, որոնք ակնկալիքները փորձում էին պարզել: Դրա հետ մեկտեղ, կային նաև լավատեսներ, որոնք ոչ միայն պատրաստ էին շարտերել իրենց պահանջները, այլ նաև վստահել երկրի գլխավոր պաշտոնին հավակնողների նախընտրական խոստումներին:

«Արդեն տասը տարի ամուսնուս տարին մեկ անգամ են տեսնում: Չմեռ պապի պես ես Նոր տարվա նախաշեմին գալիս է, գարնանն էլ Չյունամուշի պես անհետանում: Պատճառն այն է, որ անհնար էր պահել երեք երեխաներին այն աշխատավարձով, որ նա ստանում էր, - պատմում է տնային տնտեսուհի Ջարուհին: - Մեկնեց Ռուսաստան: Կանոնավոր փող է ուղարկում: Իսկ փոքրս նրան մի կարգին հայրիկ էլ չի ասում: Այն մարդուց, ով բարձր պաշտոնը կգեղեցնի, ուզում են միայն մի բան, որ մարդկանց աշխատանքով և արժանապատիվ աշխատավարձով ապահովի: Չմայած բոլոր թեկնածուներն էլ հիմա դրա մասին խոսում են: Ավելի լավ է խոստանան իրենց խոստումները կատարել...»:

Արժանապատիվ ապրելու մասին էր խոսում գրուցակիցներից գրեթե յուրաքանչյուր երկրորդը: Լավ ապրել բոլորն են ցանկանում և՛ արդեն տարիքն առածները, և՛ երիտասարդները: Երիտասարդ աղջիկները պետության ղեկավարի մասին իրենց պատկերացումներն ունենին. «Որ

ավելի հաճախ հանդիպի երիտասարդության հետ: Պուտինի նման օճ լայն կոնֆերանսներ անցկացնի: Եվ ընդհանրապես, ավելի ժամանակակից լինի», - ասում է ուսանողուհի Էլադա Պետրոսյանը և ավելացնում: - Այ՛նք երիտասարդներին, ասում են երեխաներ ունեցեք, խոստանում են նպաստներն ավելացնել... Իսկ ունի՞ց երեխա ունենանք, ասացեք խնդրեմ: Ո՛ւն հետ ամուսնանանք, երբ մեր կուրսի տղաների կեսը ցրվել է աշխարհով մեկ...»:

Հատուկ և մասնագիտությունում կայացած կանայք այլ սպասելիքներ ունեն: Կբվեարկեն նրա օգտին, ով կխոստանա հասարակության մեջ հայ կնոջ կարգավիճակը բարձրացնել: «Ինձ համար ընդունելի է այն նախագահը, ով հնարավորություն կընձեռի կնոջը բարձր պաշտոնների հասնելու: Որովհետև կինն արժանի է դրան և հաճախ կարող է իբրև ղեկավար իրեն շատ ավելի լավ դրսևորել, քան տղամարդը», - ասում է ձեռներեց Մարգարիտա Բոյաջյանը: - Ես, օրինակ, տեսնում եմ կնոջը ոչ միայն սոցիալական ապահովության կան առողջապահության նախարարի պաշտոնում, այլև ուժային կառույցներում որպես պաշտպանության նախարար: Սեզանում իհարկե կան նախադեպեր, բայց եզակի, օրինակ՝ Աժ փոխխոսնակի պաշտոնն առաջին անգամ կին զբաղեցրեց: Իսկ որպես նախագահ, ի դեպ, կանայք չեն համարակվում առաջադրվել: Ինձ թվում է, եթե նման մեկը գտնվի, նրան կբարկոծեն մինչև նախընտրական քարոզարշավ սկսելը...»:

Քաղաքականությունից հեռու, բայց ընտանիքով և աշխատանքով բավական ծանրաբեռնված հայուհիները խոսում էին այն մասին, որ չունեն ոչ ժամանակ, ոչ ուժ, ոչ էլ փող: «Իրականում կինն ավելի շատ է աշխատում, քան ցանկացած տղամարդ: Վերջինս աշխատանքից հետո հանգստանում է բազմոցին՝ հեռուստացույցի մոտ: Իսկ ի՞նչ է անում կինը օրվա վերջին. ճաշ է պատրաստում, հավաքում, վաճառում, դասերը ստուգում ամբողջը չես թվարկի, - նկատում է նախարարություններից մեկի աշխատակցուհի Արևիկ Ջուլույանը: - Բացի այդ, նաև անում են խնամված տեսք ունենալ: Սակայն ոչ բոլոր կանայք կարող են իրենց թույլ տալ գեղեցկության սրահներ և շեփինգի գնալ: Ել չեն ասում այն մասին, որ գներն օրեօր աճում են: Չայնս կտան նրան, ով հաստատ կխոստանա զգալի գները»:

Ընդհանուր առմամբ, իմ բոլոր գրուցակիցները խոսապահանջ չէին. կանանց բնորոշ հոգատարությամբ հիմնականում խնդրում էին ոչ թե իրենց, այլ ընտանիքի, երեխաների, ժողովրդի համար: «Ինձ ոչինչ պետք չէ: Միայն թե խաղաղություն լինի, - ասում է ծառայող Տաթևիկ Խրիմյանը: - Ամսահման երախտապարտ կլինեմ նրան, ով դա ապահովի: Այլ, որդիս սպա է... Նորից ռազմական գործողությունների մեջ ներքաշվել նշանակում է կորցնել այն ամենը, ինչ ձեռք է բերվել մարտադաշտում արյան գնով և տարիների համառ աշխատանքով...»:

Ասյա Ծատուրովա

Իդեալական նախագահը կանանց պատկերացմամբ

«Պետք է ազնիվ և արդարամիտ լինի: Ու որպես անհրաժեշտ պայման՝ քաղաքական փորձ ունենալ»:
«Պատրաստված, գրագետ լինի, ծրագիր ունենա և ոչ թե գեղեցիկ ներկայացնի, այլ հստակ իմանա, թե ինչպես պետք է այն կյանքի կոչել»:
«Ամենազվախալոր բարոյականությունն է, մնացածը ծանցյալ է: Եթե մարդը բարձր արժեքների տեր է, նա կդիմանա բոլոր փորձություններին, այդ թվում իշխանության»:
«Կարծում եմ՝ գլխավորը կամքն է: Նախագահը պետք է ուժեղ լինի և անվախ»:
«Պետք է հայրենիքը սիրի, ժողովրդի մասին մտածի՝ ահա թե ո՞րն է կարևորը»:
«Պետք է կրթված լինի, երիտասարդ, խելացի...»:
«Պետք է հասկանա ժողովրդի ցավն ու հոգսը: Եթե ժողովուրդը նրան չի հետաքրքրում, ապա նրանից նախագահ ղուրս չի գա»:
«Ամենազվախալորը սիրել կարողանալ է: Սիրել ժողովրդին ու այն գործը, ինչին ծառայում ես»:
«Պետք է ինտելիգենտ լինի, հայրենասեր բարձր իմաստով: Ոչ թե կուրծք ծեծի, այլ գնահատի ժողովրդին, գնահատի յուրաքանչյուր մարդու»:
«Պետք է այնքան խիղճ ունենա, որ ամեն մի մուրացկանի համար իրեն մեղավոր զգա»:
«Պետք է տեր կանգնի ժողովրդին ինչպես ընտանիքում սիրի, խոսապահանջ լինի, արդարամիտ, բարի: Մի խոսքով՝ հայր լինի»:

Անցյալ ոչ կորուսյալ

Էրատո թագուհուց մինչև ճախարակով գեղջկուհին

Հայկական դրամագիտության մեջ կնոջ պատկերին անդրադառնալու զարդարած ժառանգը վերջերս հայտնված այն հաղորդագրությունից, թե Իսպանիայում պատրաստվում են եվրոյի դրամներ հատել նշանակող կին քաղաքական գործիչների, մանկավարժների, գիտության ու մշակույթի գործիչների պատկերով: 1868 թ. Իսպանիայի միասնական դրամական միավորի (պետետա) հաստատումից ի վեր թագավորության դրամների վրա կանանց պատկերը եթե նույնիսկ գոյություն ուներ, ապա միայն այլաբանորեն: Առաջին իսպանուհին, որի կիսադեմը հայտնվեց դրամների վրա, Կարա Կանպունտերն էր, որն անցյալ հարյուրամյակի 30-ական թվականներին երկրում պայքարում էր հանուն կանանց իրավահավասարության:



Էրատո

Չարթի

Ույն բարձրության վրա, վկայում է տվյալ ժամանակահատվածում թագավորի և թագուհու հավասար կարգավիճակը: Հետագայում Տիգրան IV-ի մահից հետո, զահն անցնում է Ատրապատկանի թագավոր Արիոբարզանի որդի Արտավազդ IV-ին, որը չէր պատկանում Արտաշեսյան արքայատոհմին: Այն դժգոհության այլընտրանք էր առաջացնում, և իշխանները պահանջում են, որ Հայտն թագավոր ինչպես կարողանա իր իրավունքները հաստատել: Օգոստոս կայսրը Հայոց գահին է նստեցնում Տիգրան V-ին միաժամանակ թույլ տալով, որ Էրատոն շարունակի կրել թագուհու տիտղոսը և զբաղեցնի Հայտն թագուհու գահը: Եթե Տիգրան IV-ի հետ թողարկումների վրա Էրատոն պատկերված է արքայի կողքին երկրորդ պլանում, և նրա անունը դրամի վրա արձանագրված չէ, ապա Տիգրան V-ի հետ թողարկումների վրա Էրատոն պատկերված է դրամի հակառակ կողմում առանձին, իսկ պատկերի շուրջը հիշատակված է նրա անունը: «Էրատո Տիգրան արքայի թուրքը»: Երևում է, Տիգրան IV-ն արդեն մահացել էր, սակայն Էրատոն այդ ձևով, հավանաբար, զանգված է ընդգծել իր լայն իրավունքները իշխանության նկատմամբ որպես Տիգրան IV-ի արվածառանգ: Պատկերագրության մանրամասներից կարելի է ենթադրել, որ նրանք հավասարազոր իրավունքներ են

«Հայտնի է, որ միջնադարում 100-ից ավելի հայտնիներ զարծել են Հայաստանի դրկից քրիստոնյա տերությունների թագուհիներ: Նրանցից տասը Բյուզանդիայի կայսրուհիներ էին: Սակայն մեր պատմության մեջ են մնացել այն կանանց անունները, ովքեր կոչվել են Հայոց թագուհիներ և եղել են հայոց պետական կազմավորումների տիրակալների կանայք: Հնագույն ժամանակներից մինչև 1375 թ. 150 հայոց թագուհիներից 103-ը ազգությամբ հայ է, 1-ը՝ սասրի, 8-ը՝ պարթև, 6-ը՝ պարսիկ, 2-ը՝ պակ, 9-ը՝ հույն, 6-ը՝ հռոմեացի, 4-ը՝ վրացի, 10-ը՝ ֆրանսիացի, 1-ը՝ մոնղոլ: Նրանցից շատերն օգնել են իրենց ամուսիններին երկրի կառավարմանը՝ աջակցելով դրա բարգավաճման ու պաշտպանության գործին»:

Հայկ հաշտարյան. «Հայոց թագուհիները»

Մենամարտի են դուրս եկել թեկնածուների կանայք

Տախագահի թեկնածուների կանայք ընտրական գործընթացների մասնակիցների առավել շահագրգիռ մասն են: Սակայն եթե մեկնելու լինենք հայրենի իրողություններից, ապա նրանց գործընթացի ակտիվ մասնակիցներ չեն համարի: Թեպետ նրանք ժամանակ առ ժամանակ հայտնվում են թեկնածուների նախընտրական տեսախոյաններում կամ հարցազրույց են տալիս մամուլում, ընդհանուր առմամբ դա պատահում է խիստ հազվադեպ և ոչ բոլորի հետ: Վրաստանում իրավիճակն այլ էր: Նախընտրական մրցավազքի շրջանում քաղաքական գործիչների կանայք ոչ միայն չէին խուսափում հանրության առջև հայտնվելուց, այլև համաձայնում էին պաշտպանելու իրենց ամուսինների պատիվը հեռուստատեսային թոք-շոուների ընթացքում:

զույգին Միացյալ կուսակցությունից Վրաստանի նախագահի թեկնածու Լևոնին և նրա կնոջը՝ Նինո Միքելաձեին: Հարցման «արժանք մրցակցական» դարձավ ընդդիմադիր ճամբարից մեկ այլ զույգ՝ «Նոր աչեթի» առաջնորդ, գեղեցկատես, համընդհանուր կարծիքով Վրաստանի ամենազբաղված տղամարդ ճանաչված, նախագահի թեկնածու բժիշկ Դավիթ Գամկրելիձեն և հմայիչ Մարինա Մալիչը՝ թբիլիսցի շքանավոր ուռուցքաբանի դուստրը: Երկրի նախագահ Միխայիլ Սաակաշվիլին և նրա կինը՝ Սանդրա Ռուլիֆսը, զբաղեցրեցին միայն երրորդ տեղը: Դրան հաջորդող մրցանակային տեղերը հարցման մասնակիցները նույնպես տվեցին ընդդիմադիր դաշտի զույգերին, այդ թվում՝ նախկին նախարար Սալոմե Ջուրաբաշվիլուն և նրա ամուսնուն՝ գրող և հեռուստատեսադրամատուրգ Ջանի Կաշիային, Հանրապետական կուսակցության առաջնորդներ Թինա Խիթաշելուն և Դավիթ Ռուսախաշվիլուն, միլիարդատեր Բադրի Պատարկաճիվիլուն և նրա կնոջը՝ Իննա Գուրվաձեին:

Լայն արձագանք ունեցավ նաև Վրաստանի նշանավոր քաղաքական գործիչների կանանց մասնակցությունը թոք-շոուն: Կանանց օգուտագործած «սրեթը», թեպետ ծուլված էին բառերից, անվրեպ խոցում էին ընդդիմախոսներին: Երբեմն թվում էր, թե նրանք զերազանցում էին իրենց ամուսիններին, որոնք հայտնի քաղաքական գործիչներ են: Ընդհանուր առմամբ, վիճակագրությունը



ունեցել և հավասարապես են կիսել գահը: Էրատոյի պատկերով հատված դրամները պղնձյա են, ինչը նշան էր Հռոմեական կայսրության ենթակայության: Այս կարգի դրամներ հատվում էին սուկ որպես թագավորության առկայությունը ցույց տալու միջոց և շատ չէին: Հատված դրամները հիմնականում թողարկման վայրից հեռու չէին տարածվում, ցածր գնորունակության պատճառով չէին կարող մրցել հռոմեական դրամների հետ:

Բացի Էրատո թագուհուց, հայ իրականության մեջ կնոջ պատկերով դրամ հատվեց շուրջ 12 դար հետո՝ 12-րդ դարում, Կիլիկիայի թագուհի Չարթիի դիմապատկերով: Նա Լևոն I թագավորի դուստրն էր և ամուսնացած էր Անտիոքի իշխան Բոհեմունդի որդի Ֆիլիպի հետ: Շուտով պարզ դարձավ, որ Ֆիլիպը հայաճանաչ քաղաքականություն չի վարում, և Հայոց գահը վտանգված է: Ազնվականությունը, գահը հայկական ծագում ունեցող թագավորին հանձնելու նպատակով, գահազրկեց և սպանեց Ֆիլիպին, իսկ Չարթին ամուսնացրեց մեծ կշիռ ունեցող, ամենաշեղհակավոր իշխաններից մեկի՝ Կոնստանտին Գուրնուտաբլի որդի Հեթումի հետ: Այսպիսով, Լևոն I-ի մահից հետո թագավոր է հռչակվում Հեթումը, թագուհու գահին է նստում Չարթի: Ի նշան Հեթումի իշխանության օրինակաբանության՝ Կիլիկիայում հատվում են դրամներ Հեթում թագավորի և Չարթի թագուհու դիմապատկերներով: Մարդկային առումով Ֆիլիպի մահը մեծ ցնցում էր նրա համար, իսկ Հեթումի հետ ամուսնությունը՝ զոհաբերություն, բայց քաղաքական առումով՝ ճիշտ և ուժեղ որոշում, որի շնորհիվ Կիլիկիայում շարունակեցին գահակալել հայկական ծագում ունեցող թագավորներ: Այսպիսով, Էրատոն և Չարթի թագուհիները շոշափելի ներդրում են ունեցել հայոց պատմության մեջ և արժանացել պետականության խորհրդանշի հանդիսացող դրամի վրա իրենց պատկերի հավերժացմանը պատվին:

Հետագայում՝ պետականության կորստից հետո, շուրջ 7 դար հայկական դրամներ չեն հատվել: 1918 թ. Հայաստանի առաջին հանրապետության հռչակումից հետո՝ 1919 թ., Լոնդոնում թողարկվեցին թղթադրամներ, որոնք շրջանառության մեջ մնացին մոտ 2 տարի: Ամենամեծ՝ 250 ռուբլի անվանական արժեք ունեցող դրամի վրա և կին է պատկերվել: Այս անգամ, սակայն, դրամի վրա հայտնվելու պատվին արժանացավ գեղջկուհի կին ճախարակ գեղջիկ որպես աշխատակրության, տոկոսության խորհրդանշան:

Պատրաստեց Արմին Գրիգորյանը

Հաջողության բանաձեռը

Այսօր ասում են Քլինթոն, հասկանում են Հիլարի

Երբ տարիներ առաջ Նյու Յորք նահանգից սենատոր Հիլարի Քլինթոնը հարցրեց Յելի համալսարանի իր պրոֆեսորին՝ արժի արդյոք զբաղվել քաղաքականությամբ, վերջինս պատասխանեց. «Ոչ: Դուք չեք կարող դրամով զբաղվել: Չէ՛ որ կին չեք ունենա»: Այս դրվածք է նկարագրված 2003 թ. լույս ընծայված Հիլարիի ինքնակենսագրության մեջ՝ «Living History»: Այսօր ամերիկացիների մեծ մասը հիշատակելով նրա անունը՝ նկատի ունի ոչ թե նախկին նախագահի կնոջը, այլ պետության ղեկավարի պաշտոնի համար ամենահարմար թեկնածուին: Վերլուծաբանները դժվարանում են կանխատեսել, թե ում կտա նախապատվությունը ընտրողը, որը կանգնած է կնոջ և աֆրոամերիկացու միջև բարդ երկընդրադեմի առջև: Իսկ սոցիոլոգիական հարցումները ցույց են տալիս այդ նույն ընտրողների պատրաստակամությունը՝ երկու դեպքում էլ հանրահարելու կարծրատիպային մոտեցումները:



Թերևս, նույնիսկ ինքը՝ Բիլլ Քլինթոնը, իր առաջին նախագահական ընտրության շեմին չէր կարող պարծենալ ընտրողների այն աջակցությամբ, ինչպիսին այսօր ունի Հիլարին: Այնպիսի տպավորություն է ստեղծվում, որ տիկին Քլինթոնը պարզապես երկար ժամանակ գտնվել է իր ամուսնու ստվերում, այն դեպքում, երբ նրա խելքը ու քաղաքական հոստառությունը դրսևորում ավելի լայն հնարավորության էին արժանի: Հանրությունը կամ իսպառ չի ընդունում նրան, կամ պաշտում է, ինչն ավելորդ անգամ վկայում է այս կնոջ արտասովորությունը: Դեռ համալսարանում առաջին հանդիպման ժամանակ ուսանողուհի Հիլարի Ռոդեմին հաջողվեց խոսելու կարողությունից զրկել սպազա նախագահին: Հիլարին խորատու լեզու էր գրքերի մեջ, երբ նկատեց իրեն անթաթ մայր մի ուսանողի: Չղիմանալով՝ նա ասաց. «Նախ, եթե դու շարունակես ինձ նայել, ես մեջքով կնստեմ: Թե, զուցե, արժի ծանոթանա՞նք»:

Վաղուց գիտակցելով իր հանրային ուշադրության կենտրոնում գտնվելու փաստը՝ տիկին Քլինթոնը կարողացել է շահեկան ձևով ներկայացնել նույնիսկ իր կյանքի բացասական փաստերը: Հենց նրա այդ հատկությունն էլ օգնեց վերականգնել Քլինթոնների ընտանիքի սասանված համբավը Սոնիայի Լևինսկու հետ աղվակախարույց պատմությունից հետո: Իր «Living History» գրքում Ապիտակ տան նախկին տիրուհին խոստովանել է, որ ամենավերջին էր իմացել ամուսնու դավաճանության մասին: Ամուսնու համեմատությանը՝ Հիլարին համարվում է ավելի շրջապայաց, ավելի հիմնավոր որոշումներ կայացնող և ավելի ակտիվ քաղաքական գործիչ: Նախագահ ամուսնու հետ անցնելով քաղաքական փորձությունների թուր պարտականությունը՝ նա ձեռք է բերել ոչ թե կոշտություն, այլ մանրեղևու հատկություն:

Ծնվելով հանրապետականների ընտանիքում՝ նա երկար ժամանակ հարում էր հոր հայացքներին: Սակայն որքան մեծանում էր, ավելի շատ էր նվիրվում ժողովրդավարական արժեքներին: Այսպես, Յելի համալսարանի լավագույն ուսանողուհին կազմակերպեց առաջին ցույցը Վիետնամի պատերազմի դեմ, ղեկավարեց սենատոր Յուջին Մաքքարթիի վիետնամական արշավի հակառակորդի նախընտրական քարոզարշավը: Նա երբեք չէր թաքցնում իր ֆեմինիստական հանդուժմանը: Իսկ իրավաբանական կարիերան լավագույն ձևով էր դասավորվում: Նրան նկատում էին, գովում, երաշխավորում: Այսօր տիկին Քլինթոնը ընդգրկված է երկրի լավագույն և ազդեցիկ իրավաբանների ցուցակում: Հիլարին հանգիստ կարող էր հավակնել Արքանզասի նախագահության պաշտոնին, և երբ Բիլլին ինչ-որ մեկն ակնարկեց, թե որոշ մարդիկ կասկածում են, որ Քլինթոնների ընտանիքից այն անդամը չէ, որ նստած է նախագահական աթոռին, նա հանգիստ պատասխանեց. «Ես էլ եմ այդպես կարծում»: Ավելի ուշ Ուիլյամ Տեֆերտոն Քլինթոնը դարձավ ԱՄՆ-ի 42-րդ ղեկավարեց սենատոր: Իսկ իրավաբանական էր հավակնությունները մի կողմ դնել: Չէ՛ որ Քլինթոնների ընտանիքը նախառաջ թիմ է, և ինչպես յուրաքանչյուր թիմում՝ այնտեղ միայն մեկ առաջնորդի տեղ կար: Այսօր ամուսինները փոխվել են տեղերով:

Պատրաստեց Աննա Սաթյանը

Հավելվածը հրատարակվում է ԵՆՀԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Դավթբախյան
Չեկավորումը՝ Վահե Դիոնեսյանի
Տպագրանակը՝ 7000 օրինակ

Նորա Կանանովա